ինչպէս նաև Համամ Արևելցի, Գ. Մագիստրոս, Արիստակէս վարդապետ են: Քերականի Մեկնութեան օրինակը նուիրեց տեղւոյն վանքին. իսկ ուրիշ օրինակ մըն ալ Հեթում Բ. Թագաւորին՝ 1293*ին կատարած երկրորդ այցելութեան առթիւ:*

Յ. Երզնկացիի կեանքի յաջորդ պարագաներուն մէջ կարևորութիւն ունի նաև՝ եկեղեցական պատմութեան համար, Ատանայի ժողովին իր ունեցած մասնակցութիւնն և դերը: 1307*ին Սիսի մէջ ժողով մը գումարած էր Կոստանդին կաթողիկոս, որուն հրաւիրուեցան նաև Զաքարիա Արտազի եպիսկոպոսը և Յ. Երզնկացի, սակայն չմասնակցեցան և ոչ ալ գուցէ համակով, մինչ կ'ուզէ Հ. Ալիշան որ թուղթով մասնակցած ըլլան*[1]*: Աւելի ուշ տեղի ունեցաւ Ատանայի ժողովը նոյն կաթողիկոսին կողմէ: Այս ժողովին համար Օրմանեան դրած է* 1309 *թուականը*[2]*, որ բոլորովին անճիշդ կը թուի և արդէն ուրիշ տեղ նոյն գիրքին մէջ ճիշդ տարեթիւը կը նշանակէ: Հ. Ալիշան թուականին աւելի կը մօտենայ դնելով* 1316 *տարին*[3]*. և ուրիշ տեղ* 1317 *ճշգրտագոյն տարին, յայտարարելով թէ Սիսի* (1307) *ժողովէն տասն տարի վերջ նոյն կաթողիկոսը գումարեց Ատանայի ժողովը: Ինք սակայն աւելի հակամէտ կ'երևի ընդունիլ* 1316 *թուականը Շնորհալիի կիսատ թողած Մատթէի Մեկնութեան Երզնկացիի կողմէ շարունակութիւնը կապել ուզելով Յովհաննու Կիլիկիա կարծեցեալ երթին: «Թուղթ քաղաքական»ը կը նշանակէ* ՌՅԺԷ (1317) *և Հայոց* ՉԿԶ *թուականները՝ ինչ որ միայն ստոյգը կը թուի ըլլալ: Իրապէս Ատանայի այդ ժողովը տեղի ունեցաւ Յովհաննէս* ԻԲ *պապին ժամանակ*[4]*, որ պապ ընտրուեցաւ* 1316 *տարւոյն մէջերը և նոյն տարին Այլակերպութեան տօնը, ո՛ր օրը Ատանայի ժողովը գումարուած է, կ'իյնար յուլիսի* 18*ին: Արդ անհնար է որ այդ մէկ երկու ամիսներու մէջ գրուէին Պապին յորդորական նամակները, վճռուէր ժողովին կատարումը, հրաւէրներ ղրկուէին և ժողովականք գումարուէին: Որով ամէն հաւանականութեամբ այդ ժողովին գումարումը տեղի ունեցած է* 1317*ին յուլիսի* 10*ին ո՛ր օրն էր Այլակերպութեան տօնը*[5]*:*

Դժուարին է ընդունիլ նաև որ Յ. Երզնկացի մասնակցած ըլլայ այդ ժողովին: Հ. Ալիշան մերժելով Սիսի ժողովին մասնակցած ըլլալը, կ'ընդունի Ատանայինը եթէ ոչ Զաքարիա եպիսկոպոսին, գոնէ Յ. Երզնկացիի համար[6]*: Հին գրիչ մը Երզնկացիին հետ Զաքարիան ալ մասնակից և ներկայ կ'ընէ այդ ժողովին. «Հինգերորդ ընդհանրական ժողովն եղեւ ի մայրաքաղաքին Ատանայ Կիլիկիոյ... ի կաթողիկոսութեան Կոստանդեայ Կեսարացւոյ և ի թագաւորութեան Օշնի, յամի Տեառն* ՌՅԺԷ*ին և ի թվ. Հայոց* ՉԿԶ... *Համագումարեցին ի քաղաքն Ատանայ, ընդ որս էր և մեծ արքեպիսկոպոսն Մեծին Հայաստանի Զաքարիայ, վերատեսուչ վանից Սրբոյն Թադէի առաքելոյն... և վարդապետն հռչակաւոր Յոհան Ծործորեցի*[7]*»: Սակայն յապաղած գրչի մը այս վկայութիւնը, նոյնպէս Հ. Ալիշանի ենթադրութիւնը շատ հիմնուած չեն երևիր: Ատանայի ժողովի ցանկին մէջ կը պակսին թէ՛ Զաքարիայի և թէ Յ. Երզնկացիի անունները, որոնք անկարելի է որ մոռցուէին: Քանեցի թէև կը յիշէ իր նամակին մէջ այդ երկուքին անունները՝ իբր ներկայ Ատանայի ժողովին*[8]*, սակայն ինք վերջը պարզ յիշողութեամբ գրած է, որով կրնար դիւրաւ սխալիլ: Ժողովի ցանկին մէջ կայ Յովհաննու մը անունը՝ յիշուած վարդապետներէն առաջինը, առանց ո՛ և է մակդիրի, բայց այդ Յովհաննէսը ոչ թէ*

1. Յուշիկք. Բ. հտ. էջ 424:
2. Ազգապատում. Բ. Մաս, էջ 1799:
3. Սիսուան էջ 258. Յուշիկք. Բ. հտ. էջ 424:
4. Կ. Կալանոս, էջ 517:
5. Ազգապատում. Բ. մաս. էջ 1818:
6. Յուշիկք. Բ. հտ. էջ 424:
7. Տաշեան. Ցուցակ Ձեռ. Վիեննա. Մխիթ. Մատր. էջ 115: Ձեռագիրս գրուած է 1703էն քիչ վերջ և կը կոչուի «Թուղթ քաղաքական»:
8. Կալանոս, էջ 517: